

3. ՕՇԱԿԱՆԻ «ՉԱՐԻՐ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ» ԵՌԱՊԱՏՈՒՄ

4. Բ. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Հակոբ Օշականի յուրաքանչյուր գործ նրա գեղարվեստական համակարգում մի նոր ծիր, նկարագրվող իրականությունը յուրացնելու, հասարակական ու ազգային հարաբերությունները, անհատի հոգեբանությունը բացահայտելու կենսական նոր ու խորունկ երակներ է բացում:

Ինչպես «Մաթիկ Մելիքխանեան» վեպը, այնպես էլ «Հարիր մեկ տարուան»¹ եռապատումը անջատված են «Մնացորդաց» վեպից: Պատճառը՝ «Մնացորդաց»-ի ստեղծագործության մեջ վիպային իրադարձության հետզհետե ընդարձակուիլը, ծանրաբեռնուիլը, յորդուսի գլխատր պատճառը կազմեցին սա առանձնացման: Ժակատագրին մեկ խաղովը, նկուղի մը մեջ գառագեղուած այդ մարդերը շատ բարդ իրողությանց հանգոյցներ էին: Կեանքը այդ մարդոց վրայ առանձին, թէև հանգունատիպ ողբերգութիւն մըն էր: Բայց «Մնացորդաց»-ի հեղինակը չէր յաւակներ աշխարհներ նուաճել: Այդ գլխատր նկատումն է, որ թելադրեց անջատումը²:

«Մնացորդաց»-ից ածանցված նոր վեպերի ծնունդը այսպես է բացատրում Օշականը: Եվ սակայն նա սխալվում, ավելի ճիշտ դրսևորում է ծայրահեղ համեստություն, երբ գրում է «...հեղինակը չէր յաւակներ աշխարհներ նուաճել»: Խնդիրն այն է, որ այդ ածանցված վեպերը, առանձին-առանձին միկրոաշխարհներ են, ամբողջական գործեր, որ իրենց ընդհանրությամբ միտում են առավել ճանաչելի դարձնելու այն ծավալուն ու խոր ընդգրկումը, որ կոչվում է Օշականի ստեղծագործական աշխարհ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ ըստ էության այդ անջատված միավորների մեջ գրողը առավել ազատ է և չունի պատումը ընդարձակելու, ծանրաբեռնելու տագնապ, և, բնական է, որ ներքին այդ ազատությունը հնարավորություն է տալիս ստեղծագործական նոր թոհիչքների, արտոնում երևույթները, հարցադրումները ապահովաբար մանրամասնելու անհրաժեշտություն:

Ժիշտ է, Օշականի ստեղծագործական աշխարհը դժբախտաբար մնաց «անամբողջ», բայց այդ շքեղ կառույցը, որ ճարտարապետեց մեծ գրողը իր ինքնատիպությամբ, աննախադեպ երևույթ է մեր գրականության պատմության մեջ: Իր ծավալով, նյութի ընդգրկման ու բացահայտման ներքին երակներով այդ աշխարհը ակունքավորվում է 1830-40-ական թվականներից և իր խորք ու խորհուրդով ձգվում մինչև ետեղեկնյան շրջան:

Համարյա մի ամբողջ հարյուրամյակ: Թվում է, թե Օշականի երկերը ավելի համակողմանի, հոգեբանորեն փաստարկված տեղեկություններ են տալիս հայ-թուրք համայնքների սոցիալ-քաղաքական, պատմաֆոգեբանական հարաբերումների, թուրք պետության կառուցվածքի ու ներքին էության, պաշտոնյաների գործունեության, զրբված ու մանավանդ չգրված օրենքների կիրառության, գործող իրավակարգի մասին, քան նույն շրջանին նվիրված պատմաքաղաքական ուսումնասիրությունները:

Դժվար է նաև մեր գրականության մեջ գտնել հայ-թուրք ժողովուրդների, նրանց կեցության ու կացության, բարքերի ներթափանցման, աղետների և դրանց պատճա-

¹ Տե՛ս Բ. Օշական, Հարիր մեկ տարուան, Անթիլիաս, 1996:

² «Բագին», ԺԳ տարի, թիւ 8, Պեյրուս, 1974:

նահետևանքային կապերի, երևույթների հասունացման և դրանց ընթացքը պայմանավորող հանգամանքների գեղարվեստական մեմորիան կերտվելու, և հատկապես թուրքի՝ իբրև մարդու հոգեբանական քննության, մարդկային նկարագրի ու բաղադրության այնպիսի բացահայտումներ, որ տալիս է Օշականը: «Առանց թուրքի՝ «Հարիր մէկ տարուան»ներուն շարքը,- գրում է Օշականը,- պիտի դառնար խնդրական»³:

Սա ճշմարիտ է: Բայց ճշմարիտ է նաև, որ առանց թուրքի խնդրական պիտի լինե՞ր ընդհանրապես գրողի ստեղծագործական ողջ աշխարհը: Եվ պատահական չէ, որ թուրքը այս կամ այն չափով իրեն զգացնել է տալիս գրողի բոլոր երկերում, նույնիսկ այնտեղ, որտեղ նա ուղղակիորեն չկա: Պարզապես թուրքի ներկայությունը առավել նկատելի ու թանձր նստվածք ունի մանավանդ քաղաքային կյանքին նվիրված երկերում: Գլուղը հայ է, քաղաքը՝ թուրք: Թուրքն այստեղ ուղղակի տիրական տարր է, նա է պայմանավորում համընդհանուր մթնոլորտը, լայն առումով՝ մարդկային, ազգային ու հասարակական-հոգեբանական հարաբերությունները: Գլուղն ու քաղաքը, իրենց տարբերություններով հանդերձ, «...ամբողջացնող միութիւնն է Օշականի զգայնութեան մէջ», և որ «Գեղին մէջ Օշականը կապրէր հայը: Քաղաքին մէջ՝ թուրքը» (էջ 28):

Օշականը ամենայն մանրամասնությամբ պեղում է հայ կյանքի՝ թուրքով պայմանավոր բազմաձայն, կնճոտ շերտերը, ամեն անգամ հայտնաբերում ու յուրացնում իր աշխարհը առավել ըզգրկուն դարձնելու նոր տարածքներ: Թուրքական բանտ, թուրք ընտանիք, ամուսնական հարաբերություններ, արտամուսնական կապեր, ընտանեկան դրամա, բարքեր, սովորություններ ու հավատալիքներ, թուրքի՝ իբրև մարդու, անհատի, ազգային հոգեբանության, ապա և հարակից խնդիրների այնպիսի խորունկ բացահայտումներ, ուր ճանաչելի են դառնում ամենաթաքուն նրբություններն անգամ: Ավելացնենք, որ անկախ այս կամ այն երկում գեղարվեստական բացահայտումների ենթարկված առաջնային խնդիրներից, Օշականի վիպական միավորները, մանավանդ նրանցում առատորեն հորդող գիտակցական հոսքերը գալիս են ամբողջացնելու «իր ժողովուրդին համապատկերը»:

Նա վարպետորեն վերակերտում է հեռավոր օրերի դարձդարձիկ անցքերը, վերստեղծում մթնոլորտը, հասարակական հարաբերությունների ամբողջական պատկերը:

Անբավարարվածությունը չէ միայն. որ նրան մղում է այդօրինակ խիզախումների, այլ իր ստեղծագործական աշխարհի կերտումի կիրքը, ավելի ստույգ, ինչպես բանաձևում է ինքը. «...Գրագետի փառասիրություններ ըլլալէ առաջ պարտքի պարտադրանքն են այդ գյուղացիին բարոյական զգայարանին վրայ»: Ասել է թե թուրքական կյանքին անդրադառնալը պայմանավորված է ինչպես հայ ժողովրդի համապատկերը ավելի համակողմանի ներկայացնելու, այնպես էլ թուրքին ճանաչել տալու պարտադրանքով: Եվ սա բնական է: «Օշականի վեպը լայն հետաքրքրություններ է պարգած թուրք բարքերուն հանդէպ: Հոս ոչինչ կայ զարմանալի: Արեւմտահայ հասարակութիւնը ո՛չ մէկ շրջանի մէջ ինքզինքը ապրած է: Անոր կեանքը եղեր է կրկնուած թուրքով, որ ճակատագրի մը ձեռ ուներ իր օրերուն վերէ» (էջ 156):

Օշականը բանտում հանդիպել է հարյուր մեկ տարով բանտարկության դատապարտված իր հերոսներին, գրուցել նրանց հետ: Այդ գրույցները վիպական մթնոլորտում վերածում են մի ողջ հասարակության, նրանում ձևավորված ու գործող հարաբերությունների հոգեբանական լայնածավալ քննության: Ինչպես միշտ, այս անգամ էլ խորապես ինքնատիպ է նյութի գեղարվեստական դրսևորման կերպը: Վիպական այդ միավորները «...կը բացուին այսպէս ըսելու համար, վերջաբաններու վրա: Առաջին իսկ քանի մը էջերէն մենք ծանօթ ենք հիմնական պատահարին, ազդակին, որ այդ վէպերուն հերոսները այդ նկուղը առաջնորդած է» (էջ 220):

³ «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», հ. 10, Լիբանան, 1982, էջ 137: Այսուհետև՝ սույն գրքից հղումները շարադրանքի մէջ:

Ի հարկե Օշականը քաջ գիտակցում է, որ Այոթի մատուցման այդօրինակ կերպը կարող է թելադրել «ծանր ապօրինություններ»: Նման պարագայում պատումը ավելի հետաքրքիր դարձնելու, ընթերցողի ուշադրությունը լարված պահելու նպատակով կարող են առավել առատորեն կիրառվել արկածային տարրեր, ինտրիգներ, վիպական գործողությունները առաջ տանելու համար կանխատեսված զարտուղիներ և նման կարգի հնարածին այլ միջոցներ: Օշականին խորթ է այդպիսի միջոցներով ընթերցող շահելու միտումն անգամ: Իսկ եղած արկածները, փորձանքներն ու փորձությունները, անակնկալներն ու անսպասելի միջադեպերը նույնքան բնական են, ինչպես կյանքն ինքը: Դա կարող է տեսնել և զգալ ցանկացած ընթերցող: Օշականն իր վեպերում միշտ և ամենուր հարազատ է մնում կյանքի թելադրանքին: Կյանքի թելադրանքին հարազատ են մնում նաև նրա հերոսները, որոնք «կը քայեն ո՛չ թե քաշուած վարպետ հանգոյցներէ, այլ մղուած սկզբնական թաթառէ մը» (էջ 220):

Հերոսների գործունեության ներքին զսպանակը կիրքն է, մեծ էներգիայով լիցքավորված գերագույն պահի:

«Վերջաբաններու վրայ» բացվող Օշականի վեպերը իրենց կառուցվածքով զուգահեռվում են կյանքի թելադրած ընթացքին: Մարդն, անշուշտ, այս կամ այն հանգրվանում հայտնվելուց հետո է, որ անում է ճակատագրական հարցադրում՝ այս ինչպե՞ս եղավ: Դրան հետևում է անցած ճանապարհի, կատարած գործողությունների, արարքների տքնաչառն քննությունը, որ չի կարող ընթանալ միագիծ: Այն մերթ ընդմիջարկվում է, մերթ շաղախվում կամ զուգահեռվում, հեռանում ու հատվում է այլ գործոնների քննության հետ: Այստեղից էլ այն շեղումները, վիպական մթնոլորտում հորդացող գիտակցական հոսքերը, որ առկա են Օշականի վեպերում:

Վերջաբանները իբրև սկիզբ կիրառելու ստեղծագործական հնարանքը և վիպելու այս եղանակը ինքնին ապահովում են վիպական խոսքի դյուցազներգական հնչեղանգը, էպիկական լայն ու խոր շնչառությունը և պատումին հաղորդում զարմանալի բազմաձայնություն, առանձնահատկություններ, որ բնորոշ են ողբերգական շեշտվածություն ունեցող ժողովրդական ասքերին ու զրույցներին:

Օշականի վիպելու արվեստին հատուկ են երևույթների գեղարվեստական քննության ու բացահայտման միջոցների ու սկզբունքների այնպիսի զուգորդումներ, որ «վերջաբաններու վրայ» բացվող վիպական պատումը մշտապես ուղեկցվում է չթուլացող հետաքրքրությամբ: Ընթերցողին թվում է՝ ոչ թե վեպ է կարդում, այլ անցնում է կյանքի հարուցած անակնկալների միջով, դառնում հերոսների ապրումների ամնրնացող կրողը: Առաջադրված գլխավոր խնդիրներին զուգահեռ՝ բացահայտվում է դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, միջավայրը համալրվում է նոր հոսքերով, ընդլայնվում են վիպական տարածքի սահմանները: Հերոսների ապրումները դիտարկվում են կոնկրետ ժամանակի, գործող հարաբերությունների, տարաբնույթ կապերի մեջ: Վիպողի մոտեցումներում, անշուշտ, առկա են նրա սեփական կենսագրության դրվագները: Հիշողությունները, հերոսների հետ ունեցած հանդիպումներն ու զրույցները, նրանցից ստացած տպավորությունները, իմացությունների լայն հորիզոնը, իրադարձությունների անհատական ընկալումները հնարավորություն են ընձեռում երևույթները բացահայտելու ներսից և դրանք դարձնելու խորապես ճանաչելի: Օշականի ցանկացած երկուց և երեք առաջադրված առաջնային խնդիրների գեղարվեստական քննությունը ինչ-ինչ առնչություններով շաղախվում է հարակից խնդիրների հետ և ձգտում հայրենիքի կենդանի կենսագրության պատկերը վերակերտելու գրողի մեծ նպատակի իրագործմանը:

«Հարիւր մէկ տարուան» վիպաշարում մանրամասնությամբ բացահայտվում են ոչ միայն սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, այլև ազգային ու մշակութային, ժառանգական կապերի, գիտակցական ու ենթագիտակցական շերտերի, մարդու անհատական ու հոտային բնագոյների ու հատկապես քաղաքակրթական իրողությունների տարաբնույթ ակունքներն ու դրանց զարգացման հետագիծը:

Գրողը հենվում է ոչ թե թուրքի ու նրա գործած անօրինակ ոճիրների նկատմամբ հայ հասարակական գիտակցության մեջ ձևավորված կարծիքների, պահպանողա-

կան կամ հեղափոխական տեսակետների, այլ կյանքի կենդանի ընթացքով բաղադրված սեփական դիտարկումների վրա: Նա ուղղորդում է հասարակական մտքի մեջ իրեն զգացնել տվող ինչ-ինչ կարծիքներ և հերքում գոյատևման սրբազան կոլի ելած կազմակերպությունների մեջ քաղաքական նոխազներ փնտրողների անպտուղ ճիգերն ու ջանքերը և դրանք համարում ետեղեծյան մղձավանջից ելք փնտրելու շղագրգիտ փիճակի հետևանք:

Հայ-թուրք համայքների փոխհարաբերության, նրանց բարքերի գեղարվեստական քննության ընթացքում աստիճանաբար խմորվում, ուրվագծվում է թուրք պետական քաղաքականության միագիծ, հակահայ ուղղվածությունը՝ հենված սեփական ժողովրդի հոգեկերտվածքի, նրա առանձնահատկությունների մանրամասն հաշվառման վրա: Իսկ որ թուրքը իր մտածելակերպով, ապրելու, գոյատևելու խնդիրների շուրջ ունեցած մտորումներով, աշխարհայեցողությամբ, կենսափոխափայլությամբ, նորացող աշխարհի նոր գաղափարախոսությունների ուրույն ընկալումով հայոց, ինչպես և աշխարհի համար մնացել էր անճանաչ ու անիմանալի, ցույց տվեցին հետագա ռճիրներն ու աղետները:

Թրքությունը հատկանիշ է, առանձնահատկություն, որով վարակված, ախտահարված ժողովուրդը իր ներքին էներգիան ծառայեցնում է չարագործության ու ոճիրների: Օշականը «...թուրքը կա՛տ է ո՛չ իբր վայրագ, բարբարոս ժողովուրդ, այլ՝ իր շղային դրությամբ բարիքները այնքան յիմարօրեն ահատր չարիքի վերածող անբանություն, անմարդկայնություն» (էջ 529): Թուրքի նկատմամբ ունեցած օշականյան այս վերաբերմունքը պայմանավորում է թուրք մարդուն կերպավորելու գրողի անաչառությունը: Եվ պատահական չէ, որ թուրքերի միջավայրում մի ամբողջ կյանք ապրած մարդիկ Օշական ընթերցելուց հետո բացարձակապես նորովի են ընկալում թուրքին և զարմանքով շեշտում, որ անգամ թուրքը իրեն ոչ մի տեղ չի կարող այնպես ճանաչել, ինչպես Օշականի վեպերում:

Եվ իրոք, ինչպե՛ս է, որ անհատ, չար թե բարի մուսուլմանների ենթագիտակցական շեքտերում պահված բնազդները հանկարծ հառնում, դատնում են համընդհանուր հոտային գիտակցություն և նրանց մղում ռեբագործության: Այս և ընդհանրապես հայ-թուրք հարաբերությունների քննությունը առկա է գրողի նախորդ գործերում, մասնավորապես «Կայսերական յաղթերգութիւն» պատմվածաշարում, բայց ըստ էության այդ հարաբերությունների խորքային քննությունը ակունքավորվում է «Հարիւր մէկ տարուան» վիպաշարով, հատկապես «Հաճի Մուրատ» վեպով: Եթե վիպաշարի «Հաճի Ապտուլահ» և «Սուլէյման էֆենտի» երկերը նվիրված են թուրք մարդու հոգևերի ու տառապանքների, ընտանեկան դրամայի, բազմակնության, լայն առումով՝ թուրքական բարքերի գեղարվեստական քննությանը, ապա «Հաճի Մուրատ»-ը ներկայացնում է պատմականորեն ձևավորված և ձևավորվող հայ-թուրք հարաբերումների ընթացքը՝ պայմանավորված ինչպես հայ, այնպես էլ թուրք մարդկանց հոգեկերտվածքի առանձնահատկություններով և հատկապես թուրք պետական քաղաքականության՝ այդ հարաբերությունները ուղղորդող նենգ ու դավադիր ազդեցությամբ:

Թվում է, թե այս վեպը առաջադրված ազգային-քաղաքական հարցադրումների հոգեբանական քննությամբ առավել մոտ է «Մաթիկ Մելիքխանեանց» վեպին, և, սակայն, ոժվար չէ նկատել, որ այն իրականության պատկերման ներքին տրամաբանությամբ խորապես կապված է վիպաշարը ամբողջացնող մյուս երկերի հետ և ստանձնում է մի տեսակ նախաբանի դեր: Այդ այդպես է, մանավանդ եթե նկատի ունենանք թուրք պալատների, հարեմների միջով, փաշաների առեղների տակով անցած կնոջ ունեցած դերի սեռահոգեբանական բացահայտումները: Վերջին հաշվով՝ թուրքական բարքերի լայն ու համակողմանի քննությամբ գրողը ձգտում է գտնել սեփական ժողովրդի ողբերգության պատճառները, հստակեցնել դրանք պայմանավորող սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական այն միջավայրը, որ կարելի դարձրեց մեր ժողովրդի հետ կատարված աղետը: Վիպաշարի համընդհանուր հյուսվածքի միջով անցնում է շարքի տարբեր միավորները ի մի բերող մի երակ, որ միտում է ինչ-

պես հայ-թուրք հարաբերությունների պատճառահետևանքային կապերի, այնպես էլ սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական միջավայրի ամբողջացմանը: Ասել է թե «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլախ», «Սուլէյման էֆենտի» վեպերը, իրենց տարբերություններով հանդերձ, պատվում են նույն առանցքի շուրջ:

Օշականը, հարազատ մնալով իր սկզբունքներին, ստեղծագործական խառնվածքին, չի ընդունում վիպական կառույցների շուրջ մշակված և ավանդաբար փոխանցվող տեսական կանոնակարգերը՝ քաջ գիտակցելով, «...որ բոլոր օրենքները արուեստի գործերում շուրջ, օրենքներ են խառնուածք է մը բխող: Ամէն արուեստագետ իր ոճը կը բերէ հետը: Կաղապարները օգտակար են նրանց համար, որոնք սահմանուած են մինչև վերջը աշակերտ մնալու» (էջ 183): Երևույթի մասնօրինակ ընկալումը հարազատ է վիպական կառույցի տեսական համակարգերի կաղապարները հաղթահարած, ավելի ստույգ՝ սեփական համակարգերը ստեղծած մեծ գրողներին, որոնցից սովորել է Օշականը և ստեղծել իր՝ բացարձակապես նոր ու աննախադեպ վիպական համակարգը: Մեծ վարպետների գեղարվեստական փորձի ուսումնասիրությունը Օշականին մղում է տքնաչառ որոնումների, և նրանց վիպական կառույցների առանձնահատկությունները գրողի մոտ մարմին են առնում թարմ ու ինքնատիպ դրսևորումներով:

Օշականի ստեղծագործական մեթոդը մեծ հնարավորություններ է ընձեռում ինչպես գրողի ինքնաբացահայտման, այնպես էլ առաջադրված խնդիրները լայնքով ու խորքով բացահայտելու համար: Կյանքին զուգահեռ ընթացող վիպական իրադարձությունների տրամաբանական ավարտը, երևույթների զարգացման հետևանքը, գեղարվեստական կատարումի մեջ ներկայացնելով իբրև սկիզբ, Օշականն ուղղակի դիտարկում է ոչ միայն ավարտին նախորդող իրողությունները, այլև դրանց հետ առնչություն ունեցող խնդիրներն ու կապերը՝ առավել ընդգրկուն դարձնելով նկարագրվող իրականության ամբողջական պատկերը:

Օշականյան ընդհանուր պատումի մեջ ընդմիջարկումները, զուգահեռներն ու շեղումները, մանրամասները, նույնիսկ փակագծային բացատրությունները նպաստ են իրականության՝ իբրև կենդանի ամբողջության համակողմանի ճանաչման: Թ՛վում է՝ այստեղ յուրատեսակ կիրառություն է գտնում ամբողջը ճանաչելու վերլուծման ու համադրման փիլիսոփայական կատեգորիան: Ասենք՝ Հաճի Մուրատի անցած ճանապարհը ինքնին բացում է իրականության ամենաէական կողմերը՝ շաղախված բազմաթիվ ու բազմապիսի, նկատելի ու աննկատ մանրամասնություններով, որոնք կանոնավորում են ընդհանուր պատումի բնական շնչառությունը, առավելագույնս հստակեցնելով այդ հզոր, բայց և տարաբախտ անհատի ով կամ ինչպիսին լինելու հանգամանքները, ունեցած շփումները, որոնք և կանխորոշում են նրա վախճանը: Ողբերգական է իրականությունը, և այդ ողբերգության մեջ թոշնում են կյանքի ծաղիկները: Սա է կյանքի բնականոն ընթացքը: Վերոհիշյալ տարրերի, գլխավոր ու հարակից խնդիրների համադրմամբ են ամբողջանում Հաճի Մուրատի կերպարը և նրա գործունեության միջավայրը: Ուստի կերպարի կայացման ընթացքի ամբողջական ընկալումը ինքնին հուշում է վիպական միավորների առանձին-առանձին քննություն: Իսկապես, ո՞վ է Հաճի Մուրատը, ովքեր են ասպատակները, և մանավանդ, ո՞վ է չեռքեզուհի Սանամը, ի՞նչ և ինչպիսի՞ մակարդակներում են ծավալվում հայ-թուրք հարաբերությունները, հայոց խնդրի անդրադարձումները և զարգացման հետազոծող...

Գրողն ընթանում է նոր բացահայտումների, փաստերն ու իրողությունները դիտարկում բազմապիսի շփումների, զուգորդումների, հոգեբանական տարաբնույթ ընկալումների մեջ: Իրադարձությունների, մարդկանց ու ազգերի փոխհարաբերությունների, հոգեբանական առանձնահատկությունների գեղարվեստական քննության ճանապարհով նա ստեղծում է հայոց պատմության ամենաողբերգական ժամանակների ճշմարիտ տարեգրությունը:

Օջականը շատ լավ գիտեր ասպատակներին, շփվել էր նրանց հետ, ականատեսն ու ոչ սակավ դեպքերում մասնակիցը եղել նրանց քաջարի գործողություններին: Ասպատակները հայ ու թուրք համայնքների սերն ու համակրանքը, աներկյուղ վստահությունը, հյուրասիրությունն ու ջերմ, ընտանի վերաբերմունքը վայելող հերոսներ էին. «...լանդուզն, հպարտ, վեհանձն մարդեր են, լեռնական ժողովրդի պայմաններէն ծնած առաքինություններով»: Նրանց «կրնայիր վստահիլ ամենէն նուիրական սրբութիւնը, վստահ ըլլալով, որ երկինքին ու երկրին բոլոր փորձանքները անկարող պիտի ըլլային արատաւորել այդ սրբությունը»: «Բայց Օջականին ասպատակը հայ է, այս բառին խտացուցած բոլոր հակամարտ խորհուրդներովը: Կրքոտ, վայրագ, մանկասիրտ ու բարի, նոյն առեն ինչպէս են բոլոր լեռնական արիւնէ անմիջապէս սերած եւ դաշտենի կամ քաղքենի տրտմութեանց մէջ ապաստելու առիթ չգրտած տղաքը» (Էջ 136): Սա կես դար առաջ, երբ ասպատակությունը «քրիստոնեաներու զբաղում» էր, իսկ հիմա այն դարձել էր «պարուստի հիմնական միջոց» «Թուրքիա ասպատանած գաղթականներուն համար»: Ասպատակների անվան տակ կազմավորվում էին մեծ ու փոքր գողություններով, բռնաբարություններով ու թալանով զբաղվող ավազակախմբեր, որոնք ոստիկանության հովանավորչությամբ իրականացնում էին իշխանությունների՝ հայության մեջ ահ ու սարսափ տարածելու, հայերի կողմից դիմադրական խմբեր կազմելու փորձերին դաժանորեն հակազդելու, ավելի ստույգ՝ դրանց հնարավորությունը բացառելու կարգադրությունը: Հայ ասպատակը՝ «Այդ վեհանձն, ունեցածը աղքատին ծոցը պարպող ավազակը ցեղին պահանջած վայրագ գազանը կ'լլայ, հաւասար բնատրութեամբ մը, դիրտութեամբ մը» (Էջ 136):

Թուրքական իշխանությունները, նախապատրաստվելով 1890-ականների ջարդերին, աշխատում են մինչև վերջ ջլատել հայ համայնքը, ասպարեզից հեռացնել, ոչնչացնել հավանական դիմադրություն կազմակերպելու, զենքի ընդունակ հայ երիտասարդությանը:

Հայ տղաների առջև փակվեցին «ըմբշամարտութեան հանդէսները, մեծ, ժողովորդական սրճարանները, հանրատուները», կառավարության պարտքն էր «Սանձելու ամէն շեղում, որ կէսուր մը կրնար առաջնորդել դէպի զէնքին առքն ու «պողոտաները»:

Վարք ու բարքի մեջ ներմուծված նոր դրսևորումները, բաց և ազատ կենցաղավարությունը ընկալելով իբրև «նախափորձ արևմտյան բարքերու»՝ հին թուրքերը 1890-ականներին վերադարձան հիսուն տարվա վաղեմիություն ունեցող կենսաձևին: Կրոնական արարողությունները, «Ծերիաթ»-ի մոռացված տրամադրությունները վերստացան նախկին կիրառությունները. «Վերացաւ, զէնքի արտօնութեան հետ, երթեւեկի ազատութիւնը: Անցագիրը՝ պարտադիր՝ նահանգէ նահանգ»: Նույնիսկ սուլթանական հրովարտակով զենք կրելու արտոնություն ունեցող հայ մարդիկ անկարող էին խուսանալել: Պետության հակահայ քաղաքականությանը իրենց ծառայություններն էին մատուցում թրքասեր հայ կրոնավորները՝ պատգամելով սեփական ժողովրդին «ի հաստատ հպատակութիւն եւ ի յարատեւ ու անշեղ հաւատարմութիւն» «օսմանեան բարեխնամ գահուն»:

Հայ թերթերի մեջ մշտապէս արծարծվող Հայկական խնդիրը «թուրք պետական ու պատկան մարմինները» օգտագործում էին իբրև եկամտոտի լրացուցիչ աղբյուր «քրիստոնեան արդիական մեթոսներով, քաղաքակիրթ պիտակով կողոպտելու»: Ամենասարսափելին այն էր, որ թրքաց անասատային բնազդների ներքնախորշերից ջղածիզ արագությամբ բարձրանում էր հայատյացության կանաչ հրեշը՝ լիցքավորված գլավուրներ կոտորելու, բռնաբարելու, ոչնչացնելու կրքերով:

Եթե տասնամյակներ առաջ հայ և թուրք կտրիճ տղաները կարող էին «խմել քով քովի, պոռնիկ խաղցնել, կրկես իջնել կոխի կամ խաղի», և նրանց դիվանագիտական մի ինքնատիպ կեղծիքով սիրում էր թուրք գյուղացին, հիմա իսլամական կղերանոցը, պետական դիվանագետները մեծ չափաբաժիններով թույն էին ներարկում այդ հարաբերությունների մեջ: Օջականը փաստում է, որ հայ-թուրք համայնքների միջև եղած հակասությունները պայմանավորված են ոչ միայն կրոնական, այլև քաղաքակրթական տարբերություններով:

Բռնապետությունը կայսրության պատերազմական ու քաղաքական անհաջողությունների, սոցիալական աղետալի վիճակի, տնտեսական հետամնացության, երկրի համատարած աղքատության պատճառները բարդում էր հայության վրա: Լավ իմանալով սեփական ժողովրդի հոգեկերտվածքը՝ բռնակալությունը մեծ արվեստով, նուրբ ու փափուկ միջոցներով նրա կրոնական մոլեռանդության վրա պատվաստում էր քաղաքական մոլեռանդություն: Վերջինս դառնում էր կրոնական հայեցակարգի բնական շարունակություն, հետապնդում նույն նպատակները, առավելագույնս շիկացնում հայատյացության կիրքը: Դժբախտաբար այդ նույն քաղաքական մոլեռանդությունը մեզանում «...տարօրինակ բախտով կը շփոթուի քաղաքական առաքինության հետ, երբ յանուն այս կամ այն տեսութեան, կը սպաննէ հարազատ եղբայրը»⁴: Մինչդեռ թուրք պետությունը մշտաբար էր պահում հակահայ զգացումները և բոլոր միջոցներով դրանք տարածում ժողովրդի մեջ: Այս գործում առանձնապես օգտագործվում էին «փոքր մոլլաները», «...որոնք տրուած իմաստութիւնը կը փոխադրէին գեղէ գեղ, շրջուն ու կատաղի, բռնի բանալով հաստ պատերը գեղացիին հասկացողութեան, հոն տեղատրելու համար սրբազան հունտը, որ պիտի աճէր ու ընդհանուր պատերազմին մէջ թափէր իր բերքը, սիրտերը վերածելով թոյնի կարասներու:

Մէկ օրէն միւսը, այդ կանաչ բերաններուն շնորհով և էր, որ թուրք գեղացին սորվեցաւ նայիլ իր դրացի հայու հողին իբր ապրանք մը իրմէ կորզուած: Զէ՛ որ իր պատերունն էր անհկա, անոնց պապի արիւնովը շահուած ու իր անխելքութեանը, բարութեանը, մարդկային մեծանձնութեանը միջոցով անցած կեանորին»⁵:

Դեպքերի ու դիպվածների, պետական կարգախոսների մամօրինակ վկայակոչումները ու տեղեկատվությունները խաչբեկվում են իրադարձությունների զարգացման ներքին տրամաբանությանը՝ բյուրեղացնելով իրականության էական հատկանիշները, հայ-թուրք հարաբերումների պետականորեն կանոնակարգված դրսևորումները և մարդու ապրած դրաման: Օշականը բացահայտում է ստեղծված կացության պատմահոգեբանական պատճառները, բացում հայ-թուրք համակեցության ականապատված դաշտը, ցրում նախահեղափոխական շրջանի մասին հորինված «երանելի վիճակի» ստապատիր լեգենդը՝ ընդգծելով. «անհուն լրբութիւնը այս դատումին»:

Թուրքի համար «...քրիստոնեաները գառնուկներ էին ծնուած, շատ-շատ ոչխար դառնալու համար», և նրանք երախտապարտ պիտի մնային թուրքին, «որ շնորհը կը՛նէր անոնց, կրելու՛ իրենց գլուխները իրենց ուսերուն վրայ»: Հայոց զարթոնքը թուրքերն ընդունեցին զարմանքով ու զայրոյթով. «Անոնք վիրավորված էին իրենց խղճմտանքին մէջ ու կը տառապէին անհուն ապերախտութեան հաշտոյն, զոր գտած ըլլալ կը կարծէին դարերով իրենց շնորհներովը յղփացած անարժէք ժողովուրդէ մը», և որ «իրենց քմահաճոյքով միայն ապրելու արտօնուած կեանութեն այս ապերախտութիւնը գուցէ թուրքերուն մէջ դրաւ առաջին քաժակը թոյնին»⁶:

Թուրքերի՝ հարյուրամյակների ընթացքում մշակված և նրանց հոգեբանության մէջ որոշակիացված այս վերաբերմունքի ձևավորմանը նպաստել էր նաև հայությունը՝ իրեն պարտադրված ստրկական վիճակին ընտանի դառնալու քրիստոնեական կրավորականությամբ: Իսկ նման հնազանդությամբ ապրողին ոչ միայն ազատություն, այլև այդ մասին երազելն անգամ չեն հանդուրժում: Թուրք ժողովրդի ընդոծին արհամարանքն ու ատելությունը ներարկված էին իշխանությունների կողմից որդեգրված քաղաքականությամբ: Հայության գոյությունը հանդուրժելը թուրքերն ընդունում էին իբրև մեծ առաքինություն, բարոյաքաղաքական նվաճում, մեծահոգություն: Եվ հայության՝ ազատ ապրելու մտածումն անգամ դիտարկում էին իբրև ապերախտություն, թուրք ցեղի թիկունքին հասցրած մահացու վիրավորանք: Նրանք «... չներեցին մեզի ու չեն ալ ներած ոչ թէ մեր լեղափոխութիւնը, հապա անոր մտածումն իսկ»: Ահա թե ինչու թուրքերն այդքան ատելությամբ, ջղաձիգ մոլագարությամբ ընդունեցին հեղափոխության առաջին իսկ խլրտումները:

⁴ Հ. Օշական, Հարիր մէկ տարուան, էջ 13:

⁵ Նույն տեղում, էջ 31:

⁶ Նույն տեղում, էջ 33:

Միաբևեռ, բայց տարաբնույթ փաստերի համադրմամբ Օշականը բացահայտում է թուրքերի հոգեբանության, մտածողության, զգայական ընկալումների և ուսանած փորձի, հայության դեմ ունեցած չարաղետ կրքերի և պետական քաղաքականության անտրոհելի միասնությամբ շաղախված ազգային մի ողջ համակարգ, որ դաժանորեն դրսևորվեց 1890-ականներին և, մանավանդ, մեծ աղետի օրերին:

Եվ, սակայն, դարերի հողովույթի մեջ արմատացած, միահյուսված ընդոծին առեկույթյան ու արհամարհանքի չարաղետ կրքերի, մորթելու «անկեղծ պաշտամունքի», ընդվզած ժողովուրդների, տանուլ տված պատերազմների համար ունեցած վրեժի շաղախին հավելվեց «քաղաքակիրթ երկրների պայմանները որդեգրելու» թուրքերի կեղծարարությունը: «Մեզի հանդեպ թուրքերուն այս կեղծիքը անոնց ամենէն ստոր դասադրութիւնը եղաւ:

Միս կողմէ, մեր ժողովուրդին էր վիճակուած նոխազն ըլլալ թրքութեան ենթարկուած բոլոր վրիպանքներուն»⁷:

Կեղծարարության, նենգության, դավադրության այս թունոտ մթնոլորտում թևածում է «Ձայն մը հնչեցը» հայոց զարթոնքի հիմնը: Հայությունը զարմանալի անկեղծությամբ, պարզմիտ, բացարձակապես անթաքույց ոգևորությամբ սպասում էր ազատաբեր նոր Առավոտի: Սկսվել էր մեր ժողովրդի հոգեշրջման այլևս անկասելի գործընթացը: Ետանդուն գործունեություն էին ծավալել հեղափոխական առաջին կազմակերպությունները, որոնք, դժբախտաբար, հաճախ առաջնորդվում էին ոչ թե բուն թուրքական իրականությունից անձնցվող, այլ գրքերից քաղված, համալսարաններում ուսանած նարոդնիկական գաղափարներով: Ազատության սրբազան կռիվի համար ոչ սակավ դեպքերում գործողության մեջ էին դրվում հում, միամիտ ու անհեռանկար տեսություններ ու տեսակետներ:

Հաճի Մուրատի՝ հեղափոխական կազմակերպությունների գործունեությունից ստացած տպավորությունները զուգահեռվում, միահյուսվում ու շաղախվում են գրողի կենսագրական դրվագներին: Ահա թե այդ հույսի ու խանդի օրերի մասին ինչ է գրում Օշականի պատանեկության ընկեր Գևորգ Չագրյանը. «...Օշական «Հաճի Մուրատ» վեպին մեջ ներշնչուած է այդ օրերէն: Կը սիրեր դաշնակցական Տիգրանը, բայց կ'արհամարհէր այն գործիչները, որ դուրսէն կուգային զանազան կուսակցութեանց անունով և եղբայր եղբօր դէմ կը հանէին»⁸: Հիշենք, թե ինչպիսի ցավով ու տառապանքով է գրողը այդ օրերի անմիջական տպավորությամբ արձանագրում, որ «քաղաքական մոլեռանդութիւնը», ի տարբերություն թուրքերի, մեզանում «տարօրինակ բախտով մը կը շփոթուի քաղաքական առաքնութեան հետ, երբ յանուն այս կամ այն տեսութեան, կը սպաննէ հարազատ եղբայրը»: Առաջին շրջանի քաղաքական գործիչները որոնում ու գտնում էին մուրատներին, նրանց պարտադրում իրենց տեսություններն ու ծրագրերը, որոշում գործողությունների կերպերն ու եղանակները, տալիս հրահանգներ՝ չհանդուրժելով ու չլսելով այդ «...կրակի պէս առողջ ու քարի պէս հաստատ գեղացի քաջերուն»: Նման մոտեցումները առաջ էին բերում դառն հիասթափություն: Ավելին, այդ գործիչներն ուղղակիորեն յուրացրել էին Թուրքիայի մասին պիտակված, քաղաքագետների «հիվանդ ու մահամերձ» որակումը ու սպասում էին նրա երանակետ վախճանին:

Օշականը խորապես դառնացած է պատմական իրադարձությունների ու մասնավորապես հեղափոխական շարժումների սխալ, ոչ շիտակ գնահատումներից ու մեկնաբանություններից և աշխատում է բացահայտել ու բացատրել գերության մեջ թմբած, մահվան հետ հաշտություն կնքած ժողովրդի հեղափոխական զարթոնքի ներքին տրամաբանությունը:

Թուրք իրականության գեղարվեստական քննությունը գրողը առաջ է տանում տարաբևեռ համադրումների միջոցով: Նա թուրքական կյանքի արատավոր կողմերի

⁷ Նույն տեղում, էջ 33:

⁸ «Թուսաբեր», Դ տարի, 25 հուլիսի, 1947, էջ 5:

կողքին բացում ու դատապարտում է հայ հասարակության մեջ եղած տիրական թեթրությունները, խոցերն ու արատները: Բավական է հիշել Մուրատի՝ Պոլսից վերադառնալու և լեռ բարձրանալու ճանապարհին ունեցած մտորումները: Մի կողմից նրա էությունը լցված, լիցքավորված է հեղափոխական հպարտությամբ, մյուս կողմից՝ հուսահատության տանող տարակուսանքով: Նրան հուսահատեցնում և զարմացնում են «խաչապաշտ Երրոպային» հավատ ընծայելու յուրայինների սին հույսերը, ոճիրին հակահարված տալու ներքին վախկոտությունը, թուրք իշխանություններին ծառայություն մատուցելու պատրաստակամությունը:

Հերոսի այս մտորումներին մտովի զուգահեռենք հեղինակային դիտարկումները. «Ձայն մը հնչեց»-ի մարտահրավերը, սրբազան պաշարի կոչերը տակավին անհասկանալի և օտար էին Նիկիոյ շրջանի հայ զանգվածներին: Սրանից ոչինչ չի փոխվում: Հեղափոխությունը միակ ուղին էր ժողովրդի փրկության, և այն պարտադրված էր պատմության հրամայականով: Սա է հաստատում Հաճի Մուրատը իր գործունեությամբ: Վերջինս արդեն ուներ իր խումբը, որի անդամները «...առանց թեզի և անտիթեզի ... կը մարզվէին իրենց մատները» և «առաջին վարժութիւնը կ'առնէին արեան ճապաղիքէն»: «Յեղափոխութիւնը ...պիտի բաւեր իր թափին մէջ ընդքաշելու բոլոր Հաճի Մուրատները»:

Հերոսի ապրումները, զգայություններն ու տազնապները, հույսերն ու հուսախաբությունները բոլոր պարագաներում զուգահեռվում, հստակվում ու պարզաբանվում են հեղինակային պատմահոգեբանական բացատրություններով, և իրականությունն ու ծավալվող իրադարձությունները դառնում են առավել ամբողջական: Օշականը ոչ միայն անցնում է պատմության միջով, այլև այդ պատմությունը կրում է իր մեջ: Հերոսի ներաշխարհի և նրա գործունեության հոգեբանական վերլուծության մեջ զգացվում է երևույթի նկատմամբ ունեցած գրողի վերաբերմունք-գնահատականը: Մուրատը և մուրատները կանգնած են մեծ ճանապարհի ելակետում. «Էջերը ձեռնտու չեն՝ կազմելու համար լրիւ պատկերը նման տղոց, որոնք հասարակ հողագործ, մէկէն փոխուեցան, լրջացան ու սրբացան. երբ հայրենիքը զգացին մօտիկը իրենց դանակներուն աղէկն: Հաճի Մուրատը տարբեր է այն միւս սերունդէն ալ, որ ավելի ետքը հայրենի հողին վրայ ծնունդ տուաւ եզակի դեմքերու. նուիրման ու մահուան խորաններուն վրայ գունդագունդ զոհուող ու հարիւր անգամ անելի մեծ. քան ինքը՝ ցեղը ամբողջ»⁹:

Գրողը հավասարության նշան չի դնում Հաճի Մուրատի և «...իրեն անուանակից (ինս' Սեբաստացի Մուրատ - Կ. Ա.) ու մեր պատմութեան անցած միւս դիւցազուններուն» միջև: Տարբեր մարդիկ են նրանք, տարբեր ժամանակների ծնունդ, «Բայց ատոնց ընդերքէն կ'անցնի ապահովաբար ակօսը, որ բոլոր Մուրատները կ'առնէ կը տանի հայրենի ծովուն»: Եվ սակայն «մեր յեղափոխութեան անդրանիկ վկաները հիմա գրեթէ ըմբռնելի չեն մեզի, կամ գէթ մեր մեծ մասին»:

Այս կարգի մտորումներն ու փաստարկները, թաթախված լինելով գրողի կենսափորձով, բացում են իրերի և երևույթների ներքին էությունը և կոչված են ճշտելու հեղափոխության գնահատման շուրջ եղած շփոթը, հերքելու ետեղեկյան սերնդի ինքնաձխտումի, մտալկումի մղձավանջի մեջ քավության նոխազներ փնտրելու և հորինելու հիվանդ մտայնությունը:

Գրողը ցավով ու հիասթափությամբ փաստում է, որ մեր ժողովրդի հեղափոխական զարթոնքի և նրա զարգացման ընթացքի նորոյա գրող-փաստաբանները անտեղյակությամբ խեղաթյուրում են իրականությունը, կամա թե ակամա նեղափոխում փաստերը և հիմարանում « մեզ պատասխանատու գտնելու չափ մեր մորթուելուն»:

Դժբախտաբար, ինչպես այն օրերին, այսօր էլ այս կարգի տմարույս տիրացուների չարմիտ, կեղծ ու շինծու մտայնությունը հարվածում է մեր ժողովրդի արժանապատվությանը, նրա մաքառումի անօրինակ հերոսականությունը դիտում իբրև կորուստների պատճառ: Տարբեր տեսություններից արված քաղվածքներով, կարկաստանված մտքերով ու նույնքան էլ կարկատանված շարադրանքներով չի կարելի

⁹ Նույն տեղում, էջ 38:

մեկնաբանել մեր պատմությունը, խեղաթուրված չափանիշներով արժեքավորել անցյալը: Քաղաքական ցնհկություն է իր ցեղն ու պատմությունը ուրանալու անամթությունը տարազավորել հայ կյանքին, հայ պատմությանը, մեր «աննուաճ կարօտին», մեր ցավին ու տառապանքին չառնչվող կամ համարյա չառնչվող տեսությունների ու դատողությունների գույնզգույն լաթերով:

Վտանգավոր «վատ ու անանուն բան է» նաև, որ անօրինակ աղետների ծանրության տակ պատեպատ խփվող մարդիկ քավության նոխազներ փնտրելու իրենց ճիգ ու ջանքի մեջ հավատում են թուրքերի մոզոնած «հայ-թուրք եղբայրական համակեցության» ստապատիր, նենգ ու դավադիր հորինվածքին:

Օշականը բացում է մեր քաղաքական կյանքի և ազգային հոգեբանության այն խորշերը, ուր փարթամորեն աճում են ազգային միասնությունը ջլատող, կովազանություն սերմանող որակներ. «Ու իրար կուտենք, առանց անդարառնալու մեր ամօթին»:

Օշականի վիպական պատումը բազմաշերտ ու բազմաճյուղ է, ինչպես կյանքը իր հակադրությունների ու հակասությունների միասնությամբ ու ամբողջականությամբ, ուր առաջադրված խնդիրների զարգացումները ընթանում են կտրուկ և անսպասելի շրջադարձերով և մշտապես հանգուցալուծվում անկառավարելի կրքերի «կառավարումով»:

Նյութը վերաճում է ինքն իրենից, և թվում է՝ այդ աճումի մեջ զգում ես նոր վեպի վերընձյուղումը:

«Հաճի Մուրատ» վեպի ընդհանուր համակարգում այդպիսի տպավորություն է թողնում ասպատակի և Սանամի հարաբերությունների պատմությունը, որն իր հարաբերական ինքնուրույնությամբ փոխում է պատումի «միակետրոն» ընթացքը, միաժամանակ հաստատում, պատճառաբանում կյանք-գրականություն հարաբերումի մասին ունեցած գրողի մտածումների ճշմարտացիությունը:

Մի առիթով Օշականը գրում է. «Եւ ոճիրը, միշտ գրեթե շրջուած կիրքն է սեռին մէկ շէնքը», և ապա՝ «1900-ին թուրքը մէկ գրականութիւն ուներ՝ կինը: Հայը մէկ գինի՝ սեռին արբեցնող, պատրող սփոփանքը»: Գրողը հիմնավորում է կյանքը դիտարկելու իր սկզբունքը. «Օշական կիրքէն դուրս ի՞նչ ուներ իր տրամադրութեան տակ, հոգեղէն դրութիւններ, հոգեբանութիւններ սեւեռելու» (138):

Կրքերը իրենց մեջ կրում են ճակատագրի գաղտնագրերը և հերոսին ուղեկցում ողբերգական վախճանի:

Սանամի սեռահոգեբանական նկարագրի և նրա գործունեության վերլուծությամբ գրողը բացահայտում և ճանաչելի է դարձնում թուրք իրականության փակ դրոների ետևում առկա մի տարածք, «...ուր սեռային հոսանուտը ընդոծին մագնիսականութիւն մըն է, բացատիկ արդիւնքներ յատնաբերող»: Գրողը թուրք կնոջ ողբերգական վիճակը քննում, պատճառաբանում ու հիմնավորում է պատմագիտական հղումներով, այդ հասարակության մեջ ամրակայված, չգրված, բայց գործող օրենքի ուժ ստացած սովորություններով և բարքերով: Թուրք կայսրության մեջ կինը պարզապես «վայելքի գործիք մըն էր ու միմիայն ատիկա»: Յանկացած պահի նրան կարելի էր արձակել: Եվ այդ դժբախտ արարածը ուրիշ զբաղմունք չուներ, «բացի արուն իր մարմնին կապել կրնալու ահաւոր մարզանքէն»:

Պալատական և իշխանական դասի կանայք, որ «1900-ին լեզեռն էին» Պոլսամերձ տարածքներում, «քաղաքականութիւն կ'ընէին հայերու գլխուն»:

Թուրք կին «տեսած» քրիստոնյան չմտնելու համար պարտավոր էր փոխել դավանանքը և ամուսնանալ նրա հետ: Այլապես կմորթվեր: Փրկության ուրիշ ճանապարհ չկար: Եվ սակայն վերոհիշյալ տիպի կանայք կարողանում էին շրջանցել այդ օրենքը՝ իրենց տներում պահելով հայագգի խոհարարներ, պարտիզպաններ, ծառաներ: Գրողը լայն ու խոր դիտողականությամբ բացում է այդ աշխարհի անտեսանելի տարածքներն ու փակ դռները, հայտնաբերում նրբություններ, որ ամուսնական-սեռական հարաբերությունների մեջ վերաճում են մի ողջ կենսակերպի: Հաճախ փոքր քաղաքներում հայտնվում էին պալատների ու հարեմների միջով անցած կանայք և իրենց ունեցած հարստության, պալատական լայն կապերի, երբեմն էլ «ցնցող գեղեց-

կութեան» շնորհիվ ամուսնանում էին «պզտիկուց իգացող» փառամոլ պաշտոնյաների հետ:

Սանամը գալիս է այս միջավայրից ու իր մոլեգին ցանկապիրությանը հագուրդ տալու ձգտումի մեջ ակամայից նպաստում է Մուրատին ձերբակալելու՝ ամուսնու և իշխանությունների նպատակի իրականացմանը: Սանամը տիրապետում է թովելու, գայթակղելու, հրապուրելու, արուհի իրեն կապելու բոլոր միջոցներին և փորձառու բոզի դիպուկ նշանառությամբ պարզապես շանթահարում՝ կանանց նկատմամբ «աստուածային» անտարբերություն ունեցող և լեռ բարձրանալուց հետո նշանը ետ ուղարկած ասպատակի ինքնասիրությունն ու տղամարդկային արժանապատվությունը:

Եվ Մուրատը հայտնվում է գայթակղության նրբահյուս թակարդում. «Ու լեռներուն անառիկ ասպետը, հարիր ու մէկ յանցանքներով դատապարտուած մահապարտը, որին գոյութիւնը պաշտօնանկ էր ըրած կարճ ժամանակի մէջ չորս հատ գայմագամ, իջաւ ցած, թուրքերուն բերդը, մահուան հետ դաշինք կնքելով»¹⁰:

Սանամի հետ ունեցած տաք ու խոտվահույզ հանդիպումները, կրքերի դրսևորման գունախաղերը պատկերվում են այնպիսի նրբությամբ, որ թվում է՝ դրանք մահվան գնացող մարդու համար փափուկ ու ցանկալի սփոփանք են, գալիք տառապանքին անոպա համակերպվելու միևնույն արևը:

Գրողը ուղղակի գծագրում է «թղթակցութեան դիւանին ընդհանուր տնօրէնի» բնակարանի հատակագիծը: Բնակարանի մի մասում Սանամը վայելում է ասպատակի առնությունը, մյուս մասում ամուսինը իր դողդոջուն մարմինը տաքացնում է «իգացող բարտուղարով»: Աղետի օրերին վատթարագույն դերակատարությունը վերապահված էր պաշտոնական աթոռներն զբաղեցնող այս տխւեղ մարդուկներին:

Առանձնապես տպավորիչ է Մուրատին ձերբակալելու պահի նկարագրությունը: Հոգեբանական բարդ իրավիճակ՝ տագնապալից ու ջղագրգիռ, բայց մարդկանց պահվածքը՝ հանգիստ ու անշտապ: Դրության տերը Սանամն է, որի «գեղեցկութիւնը կը սրբագործէր շատը իր մեղքերուն», և «Ծանրահիւս գիշերագգետը կը կոկէր անոր վրայէն բոզութիւնը և գայն կ'ընէր տեսակ մը գիշերագրալ իշխանութի»:

Լեռների տիրակալ, հզոր և հպարտ ասպատակը հնագույն հպատակն է Սանամի: Վերջինս է ընդունում որոշումներ և կայացնում վիճակից դուրս գալու ճակատագրական վճիռը: Ամուսնուն բոլորովին չի հետաքրքրում կնոջ դավաճանությունը (առաջին դեպքը չէ), նա բավարարվածության մեծ զգացումով է լցված, ապրում է մեծ հրճվանք, որ վերջապես ինքը կարող է իշխանություններին հանձնել ամենուր փնտրվող ասպատակին, բավարարել իշխանությունների պահանջն ու իր անասնական բնագործ՝ նվաստացնել, ոչնչացնել իր պետության թշնամիներին: Նա իրմով խտացնում է «պետական պաշտօնէութիւն որակուած դասակարգի» նկարագիրը՝ «իգաղէմ ու իգացած, իր մարմինին գնովը ընելով վերելքը իր կեանքին, խոյ արուեստով մը սորվելով երկու տեւերուն ալ թաքնաթաքուն զօրութիւնները, պահելով իր ասպարէզին հասունութեան մէջ խարդախ հմայքը էզին, զոր եղաւ տարիներով, առանց կամքի, ինքնութեան, մեծերու ձեռքին» հլու կամակատար. կին՝ իր կնոջը¹¹:

Կենցաղի, կացության, բարքերի ու սովորությունների, ընդհանրապես իրականության և հերոսների հոգեբանական դրությունների գեղարվեստական քննությունը մշտապես շարախվում է հայ-թուրք հարաբերությունների խնդիրներին: Սանամի դիվանապետ ամուսինը տանը կնոջ հետ մշտապես խոսում էր ասպատակին ձերբակալելու իր ջանքերի ու ծրագրերի շուրջ, ոգևորվում հայության բնաջնջումին նախապատրաստվող համընդհանուր խանդավառությամբ և «...ցախ մօրուքը կը շոյէր ու կերթար դիւան, կինը ձգելով ասպատակին»: Նույնիսկ թուրքերի հետ ամենօրյա շփումներ ունեցող Հաճի Մուրատը, իր թաքստոցից լսելով այդ գրույցները, զարմանում ու ապշում է, իսկապես. «որքան քիչ կը ճանչնայիք այն ժողովուրդը, որուն դէմ ելլելու որոշում էինք տուած»:

¹⁰ Հարիր մէկ տարուան, էջ 68:

¹¹ Նույն տեղում, էջ 60:

Ձերբակալության պահից իսկ Մուրատը մահամերձ տարածքի մեջ է, կյանքի ու մահվան ճամփաբաժնում: Լեռներում կոպելու և մեռնելու նրա երանավետ վճիռը ճակատագրի նախասահմանած մի անակնկալով փոխակերպվում է հարյուր մեկ տարվա բանտարկության և մոխրանում սեռի ու կրքի ամենակույլ երախում: Նրա պահվածքի մեջ մի տեսակ հոգնածություն կա, մահվան հետ հաշտվածի փիլիսոփայական անտարբերություն: Նա ուշացումով պիտի հասկանա, որ «...սեռին վրայ մարդ անհասուն է միշտ և անարբագրելի եսապաշտ մը»¹²: Վիպական յուրաքանչյուր դրվագ իմաստավորվում է նոր հայտնություններով, որոնք խորապես բնութագրական են ժամանակի ոգուն և իրականությունը բացահայտում են նոր կողմերից՝ նպաստելով պատճառահետևանքային կապերի քննության ամբողջացմանը: Անընդհատ բացվում է թուրք մարդու և հավաքականության վարքաբանության հոգեբանական դաշտը՝ ինքնատիպ դրսևորումներով. «Թուրքերը ոչ մէկ ատեն այնքան ահաւոր են ու տգեղ, որքան շղթայուած մարդ մը արհամարհուած ատեն»¹³:

Հաճի Մուրատի ձերբակալությունն ու դատավարությունն իշխանություններն օգտագործեցին ամբոխի չարաղետ կրքերն ավելի շիկացնելու, նրա «...գայրոյթին արձակելի քարիւղ, ու պատրաստել անոր ժանիքները շատ մերձաւոր սպանդին»... «Հաճի Մուրատ, ամբոխին երեսակայութեան մէջ գերեզմանէն ելած հայ թագաւորի մը կը նմանէր»: Թուրքերը ջարդը նախապատրաստելու նախաշեմին օգտագործում են մեծ ու փոքր բոլոր հուզումները իբրև ամբոխը ջղագրգռելու հոգևոր սնունդ՝ յուրաքանչյուրին նախապատրաստելով կոտորածի մթնոլորտին: Կայսրությունը ծայրեծայր հագեցած էր հայերի դեմ եղած ընդոծին ատելությամբ: Ամբոխը արյան ծարավ էր, իսկ այդ ծարավը միշտ կարելի է հագեցնել կոտորածներով ու ջարդերով: Ասել է թե հասարակական համընդհանուր ատելությունը, լարվածությունը միայն ու միայն կարելի է թուլացնել ջարդերով: Նկատված է, որ «Թուրքերը ամէն տարածուն ջարդէ յետոյ մեղմ են զգացած իրենք զիրենք ու մոռցած՝ իրենց թափածը: Ծնորհներ ու որբահաւաքում կեղծիք չեն ամբողջութեամբ: Թուրքը կ'նէ ատոնք իրմէ վեր օրէնքներու անսալով»¹⁴: Թուրք իշխանությունները հմուտ, հանդուգն, նպատակասլաց կեղծարարներ են. կարողանում են իրենց նենգությունը, դաժանությունը, ստորագույն արարքները վարագորել մեծահոգության, ներողամտության ու հոգատարության շղարշով: Իբրև հաստատումը «երախտամոռ հայերի» նկատմամբ դրսևորած թուրք իշխանությունների «մեծահոգության և բարության» կայսերական ատյանը փոխեց դատարանի կայացրած մահվան վճիռը և Հաճի Մուրատին դատապարտեց «հարիւր մէկ տարուան թիապարտութեան»:

Եվրոպական թերթերի «վարձուած» թղթակիցները չուշացան բանտում հանդիպել «ամէնէն ահաւոր քոմիթաճի»-ին, գովերգել թուրքական արդարությունը, ներողամիտ վերաբերմունքը պետության թշնամու նկատմամբ, փառաբանել «քրիստոնէական վեհանձնութիւնը իսլամներու խալիֆային»:

Ուրիշ ժողովուրդների վրա վերևից նայելու արհամարհական կեցվածքը, իր հզորության, անպարտելիության ու բացառիկության մասին ունեցած հոգեբանական բարդույթը թուրքին դարձնում էին ինքնավստահ, լկտի ու ամբարտապան:

Գրողը «Հաճի Ապտուլահ» և «Սուլեյման էֆենտի» վեպերում լայնորեն բացում է թուրք մարդու ներհոգեկան կուտակումների շերտերը, ոգիների ազդեցության ոլորտում հայտնված անհատի խելահեղ արարքների դավադիր գաղտնարանները, ցույց տալիս կենցաղավարության մեջ ծանրորեն նստած բարքերն ու սովորություններն ուղղորդող միատիկ զգացումների դերն ու աղետավոր հետևանքները: Օշականը խորապես դատապարտում է ինչպես կրթադաստիարակչական համակարգը, գողերի, ավազակների ու մարդասպանների հետ գործակցող, հայության դեմ նրանց գործունեությունը համակարգող ոստիկանությանն ու ընդհանրապես բռնակալությանն

¹² Նույն տեղում, էջ 69:

¹³ Նույն տեղում, էջ 93:

¹⁴ Նույն տեղում, էջ 89:

սպասարկող կառույցները, այնպես էլ դատապարտում է ընտանիքից ներս գործող արատավոր հարաբերությունները: Բռնակալության ձևավորած հասարակական, բարոյափոփոխական, սոցիալ-քաղաքական համակարգերը գործում են անապատային բնագոյների կենսաբանական ժառանգականության թելադրանքով: Գրողը ցավում, ափսոսում է, որ թուրք մարդիկ իրենց ընդհանրության մեջ կարող են հեշտությամբ ընկնել զոհեր ու արյուն պահանջող ջղագրգռության մոլագար շրջատույտի մեջ և մղվել մեծ եղեռնագործությունների: Նույնիսկ տարիներով Եվրոպայում կրթություն ստացած մարդիկ հրաժարվեցին ուսանած հումանիտական գաղափարներից և իրենց վաչկատուն պապերի նման դարձան արյունարբու դահիճ:

Ժամանակը և Եվրոպայի հետ ունեցած շփումները չէին փոխել նրանց հոգեխառնությունը: Համընդհանուր ջղագրգռության գերագույն պահերին թուրք հավաքականության մեջ բնագոյները խաբում, շրջանցում են հասարակական արգելքների գիտակցված համակարգը և գործում անարգել: Իսկ այդպիսի պահերը, ինչպես գրում է Օշականը, «որի ձեռով չէ, որ տրամադրուեցան այդ մարդոց, այլ՝ ամիսի, տարիի, տարիներու»:

К. Б. АГАБЕКЯН - Трилогия А. Ошакана «Сто один год». - В статье на материале трилогии Ошакана «Сто один год» делается попытка выявить специфику романного мышления писателя, показать особенности построения произведения, своеобразие его предметно-образной системы.